



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
Խորհրդի 18.11.2013թ.-ի թիվ 46 որոշմամբ

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

(Ակտիվի դաս՝ Հրապարակային)



ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):
- 1.2. Սույն Պայմաններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո ԻԱՄ-ի կողմից հաստատված կանոններով (այսուհետ՝ ԱՊՊԱ օրենսդրություն):
- 1.3. Սույն Պայմաններով իրականացվող ապահովագրական հատուցումների սահմանաչափերը և հաշվարկման կարգերն իրականացվում են ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:
- 1.4. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նան՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն» դասի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. **Ապահովագրող՝** «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ.
- 2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ հիմնարկ.
- 2.3. **Պայմանագիր՝** ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր.
- 2.4. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից հնարավոր բոլոր ապահովագրական հատուցումների իրականացման առավելագույն չափ.
- 2.5. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով Ապահովադիր կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման համար վճարվելիք գումար.
- 2.6. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած իրադարձություն, որի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել ապահովագրական հատուցում.
- 2.7. **Տուժող՝** անձ, որին Ապահովագրական պատահարի հետևանքով հասցվել է վնաս.
- 2.8. **Ավտոտրանսպորտային միջոց՝** ճանապարհային ոստիկանությունում գրանցված և ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ, բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոց (ներառյալ՝ թեթև մարդատար ավտոմոբիլներ, ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմոբիլներ, մոտոցիկլետներ, քարշակներ, տրոլեյբուսներ և այլն), որի օգտագործումը վերոհիշյալ նպատակներով թույլատրված է Հայաստանի Հանրապետության տարածքում և նշված է Պայմանագրում.
- 2.9. **Լիազորված տիրապետող՝** Ապահովադիր կողմից Պայմանագրում նշված անձ, ով ունի Ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, ում կողմից Ավտոտրանսպորտային միջոցը վարելու (օգտագործելու, շահագործելու) հետևանքով առաջացած դեպքը Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով հանդիսանում է Ապահովագրական պատահար: Ապահովադիրը հանդիսանում է Լիազորված տիրապետող, եթե նրա վարորդական իրավունքի վկայականի տվյալները նշված են Պայմանագրում.



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 2.10. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.
- 2.10.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
- 2.10.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի և կորստի չափից:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

- 3.1. Պայմանագրով Ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (Լիազորված տիրապետողի) այն գույքային շահերը, որոնք կապված են Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող Ապահովադրի (Լիազորված տիրապետողի) քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից Տուժողին կամ նրա գույքին պատճառված Օրենքով և Պայմաններով սահմանված վնասների գծով:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

- 4.1. Պայմանագրի համաձայն՝ Ապահովագրական պատահար է համարվում Լիազորված տիրապետողի կողմից Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում (եթե Պայմանագրով այլ տարածք նախատեսված չէ) Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով Տուժողին հետևյալ վնասների պատճառումը.
- 4.1.1. անձնական վնասներ, որոնք ներառում են Տուժողի առողջությանը պատճառված վնասները և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտները), ինչպես նաև Տուժողի մահը,
- 4.1.2. գույքին պատճառված վնասներ, որոնք ներառում են Տուժողին պատկանող գույքի վնասվածքը կամ ոչնչացումը՝ բացառությամբ վնաս պատճառող Ավտոտրանսպորտային միջոցին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող և Տուժողին սեփականության իրավունքով պատկանող գույքի:

ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1. *Ապահովագրական պատահար չի հանդիսանում և Ապահովագրողը չի հատուցում.*
- 5.1.1. *անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,*
- 5.1.2. *ահարելչական, ռազմական գործողությունների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի վնասները,*
- 5.1.3. *վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,*
- 5.1.4. *Տուժողի դիտավորության հետևանքով սովյալ Տուժողին պատճառված վնասները,*
- 5.1.5. *պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին պատճառված վնասները,*
- 5.1.6. *արվեստի գործերին, թանկարժեք զարդերին, քարերին կամ ազնիվ մետաղներին, հնաձև իրերին, հավաքածու նմուշներին, պատճառված վնասները,*



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 5.1.7. բեռների փոխադրման պայմանագրով փոխադրվող բեռներին պատճառված վնասները,
- 5.1.8. օրենքով նախատեսված այլ վնասներ:
- 5.2. Ապահովագրական պատահարի ժամանակ Պայմանագրով Տուժող չեն համարվում և Ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում՝
 - 5.2.1. վնաս պատճառած Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, Ապահովադիրը և վնասը պատճառած անձր, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ևս այլ անձանց պատկանող և Պայմանագրով Ապահովագրված Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ այլ անձանց կողմից պատճառվել է վնաս.
 - 5.2.2. այն անձինք, որոնք գտնվել են հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած Ավտոտրանսպորտային միջոցի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք տեղյակ չեն եղել, որ Ավտոտրանսպորտային միջոցը հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած է եղել, կամ Ավտոտրանսպորտային միջոցի մեջ գտնվել են իրենց կամքին հակառակ.
 - 5.2.3. վնաս պատճառած Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ընտանիքի անդամները՝ գույքին պատճառված վնասների մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ևս այլ անձանց պատկանող և սույն պայմանագրով ապահովագրված Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ այլ անձինք վնաս են պատճառել: Սույն կետի համաձայն՝ ընտանիքի անդամներ են Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ծնողները, ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը:
- 5.3. Պայմանների համաձայն ապահովագրական պատահար չեն համարվում և ըստ այդմ Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի տրամադրում հետևյալ դեպքերում՝
 - 5.3.1. Ավտոտրանսպորտային միջոցը շահագործվել է Պայմանագրում նշված շահագործման նպատակից տարբերվող այլ նպատակով,
 - 5.3.2. Ավտոտրանսպորտային միջոցը շահագործվել և (կամ) օգտագործվել է այն վարելու իրավունք (այդ թվում՝ համապատասխան կարգ) չունեցող անձի կողմից,
 - 5.3.3. Ավտոտրանսպորտային միջոցը շահագործվել և (կամ) օգտագործվել է առանց իր վարորդական վկայականում նշված պարագաների կիրառման,
 - 5.3.4. Ավտոտրանսպորտային միջոցը շահագործվել և (կամ) օգտագործվել է կեղծ հաշվառման վկայագրով կամ կեղծ վարորդական իրավունքի վկայականով, ինչպես նաև կեղծ կամ փոխված հաշվառման համարանիշով կամ առանց դրա,
 - 5.3.5. պատահարն առաջացել է Ավտոտրանսպորտային միջոցի անօրինական վերասարքավորման հետևանքով,
 - 5.3.6. պատահարն առաջացել է Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի և (կամ) կահավորվածության՝ ՀՀ կառավարության սահմանած՝ Ավտոտրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկին չհամապատասխանելու հետևանքով,
 - 5.3.7. Ավտոտրանսպորտային միջոցը շահագործվել և (կամ) օգտագործվել է ոչ Լիազորված տիրապետողի կողմից,
 - 5.3.8. Լիազորված տիրապետողը գտնվել է ալկոհոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի ազդեցության տակ կամ կատարել է այնպիսի գործողություն, որով Ապահովագրողին զրկել է իր՝ ալկոհոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի ազդեցության տակ գտնվելու վերաբերյալ համապատասխան փորձաքննություն անցկացնելու հնարավորությունից կամ այդպիսի փորձաքննության անցկացումն այդ գործողության հետևանքով դարձել է անիմաստ,
 - 5.3.9. Լիազորված տիրապետողն առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը,
 - 5.3.10. Ապահովադիրի, Լիազորված տիրապետողի կամ Ավտոտրանսպորտային միջոցի ուղևորի կողմից կանխամտածված կամ դիտավորյալ, այդ թվում անօրինական գործողության կատարման կամ անգործության դեպքում,



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 5.3.11. Ավտոտրանսպորտային միջոցը շահագործվել և (կամ) օգտագործվել է հակաօրինական գործողություն կատարելու նպատակով,
- 5.3.12. պատահարն առաջացել է Ավտոտրանսպորտային միջոցում կամ դրա վրա գտնվող թունավոր կամ պայթուցիկ նյութերի հետևանքով, բացառությամբ Ավտոտրանսպորտային միջոցի բնականոն աշխատանքն ապահովող նյութերի, որոնք լցված են Ավտոտրանսպորտային միջոցի մաս կազմող և տվյալ նյութի համար նախատեսված տարայում,
- 5.3.13. Ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված թույլատրելի քանակից և (կամ) քաշից ավելի բեռի և (կամ) ուղևորի տեղափոխման դեպքում,
- 5.3.14. Ավտոտրանսպորտային միջոցը ոչ վարելով տեղափոխման դեպքում (որպես բեռ փոխադրելու, քարշակելու և այլն),
- 5.3.15. պատահարն առաջացել է Ավտոտրանսպորտային միջոցի մեջ կամ դրա վրա գտնվող գույքի ոչ պատշաճ կերպով ամրացված լինելու կամ ոչ օրինակ տեղադրելու հետևանքով,
- 5.3.16. Ապահովադրի կամ Լիազորված տիրապետողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար,
- 5.3.17. պատահարի առաջացման պատճառների և հանգամանքների, ինչպես նաև դրա առաջացման հետ առնչություն ունեցող անձանց մասին Ապահովադրի կամ Լիազորված տիրապետողի կողմից կեղծ կամ ոչ հավաստի տեղեկությունների տրամադրման դեպքում,
- 5.3.18. Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած պատահարի դեպքում,
- 5.3.19. պատահարն առաջացել է միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության հետևանքով:
- 5.4. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց Ապահովադրի կամ Լիազորված տիրապետողի կողմից Պայմանների 10.1. կետով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:
- 5.5. Սահմանված ժամկետում (բացառությամբ այն դեպքի, երբ Տուժողն ապացուցում է տեղեկացնելու անհնարինությունը) Տուժողի կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված 3 (երեք) ամսվա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Տուժողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 5.6. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումը մերժվում է հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.
 - 5.6.1. Տուժողը կամ նրա իրավահաջորդն արդեն իսկ հատուցում է ստացել վնասը պատճառած անձից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնաս պատճառած անձի կողմից հատուցումը ստացվել է չհատուցվող գումարի և (կամ) Ապահովագրական գումարը գերազանցող գումարի գծով,
 - 5.6.2. Տուժողը կամ նրա իրավահաջորդն Ապահովագրական պատահարից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, ինչպես նաև եթե այդ փաստաթղթերը կեղծ են կամ թերի:
- 5.7. Ապահովագրողը չի հատուցում նաև Ապահովադրի (Լիազորված տիրապետողի) կողմից հնարավոր վնասները նվազեցնելու նպատակով քայլեր չձեռնարկելու հետևանքով առաջացած նոր վնասները:
- 5.8. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե պարզվի, որ Պայմանագիրը կնքելիս կամ դրա գործողության ընթացքում Ապահովադրի կողմից



Ապահովագրողին հայտնվել են ապահովագրական ռիսկին առնչվող կեղծ տեղեկություններ կամ այդ տեղեկությունները թաքցվել են, ինչպես նաև այն դեպքերում, երբ ապահովագրական հատուցումը նախատեսված չէր իրականացնելու:

- 5.9. *Ապահովագրողը չի հատուցում Տուժածի Ավտոտրանսպորտային միջոցի կամ գույքի վերանորոգումից հետո տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի կամ գույքի շուկայական արժեքի ցանկացած նվազման հետ կապված ծախսերը (վնասները):*
- 5.10. *Ապահովագրողը կարող է հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:*

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 6.1. Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) միջև փոխադարձ համաձայնությամբ:
- 6.2. Ապահովադրի կարող է հանդես գալ Ապահովագրական գումարը մեծացնելու պահանջով՝ վճարելով համապատասխան չափով Ապահովագրավճար:
- 6.3. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողն իրականացրել է ապահովագրական հատուցում, ապա Ապահովագրական գումարը նվազում է կատարված ապահովագրական հատուցման չափով:
- 6.4. Եթե Պայմանների համաձայն Ապահովագրական պատահարի հետևանքով վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի սահմանված Ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի սահմանված Ապահովագրական գումարի սահմաններում:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԶՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

- 7.1. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:
- 7.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:
- 7.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել միանվագ (միանգամյա վճարումով) կամ մաս-մաս՝ Պայմանագրով սահմանված կարգով:
- 7.4. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել կանխիկ եղանակով Ապահովագրողի դրամարկղ կամ ապահովագրական միջնորդին (գործակալին կամ բրոքերին) կամ փոխանցվել Ապահովագրողի համապատասխան բանկային հաշվին:
- 7.5. Եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական Ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված Ապահովագրավճարի չափը:
- 7.6. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադրի չի վճարում միանվագ կամ առաջին հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ Ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:
- 7.7. Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե Ապահովագրական ՊԱՏԱՀԱՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՀԻՆ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆ



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

7.8. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել միանվագ կամ հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից 5 (հինգ) օր հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը: Այս դեպքում Ապահովադիրի կողմից Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏ, ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳ

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադիրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով տրամադրել ապահովագրական հատուցում:
- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադիրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
- 8.3. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրից պահանջել.
 - 8.3.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,
 - 8.3.2. Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ ունեցած իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,
 - 8.3.3. Լիազորված տիրապետողի անձնագիրը, համապատասխան տրանսպորտային միջոց վարելու իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,
 - 8.3.4. իրեն տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,
 - 8.3.5. այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:
- 8.4. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով՝ փոխադարձ համաձայնությամբ:
- 8.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու և կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 8.6. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Կողմերի, Լիազորված տիրապետողի և Տուժողի համար:
- 8.7. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների և նրա թարգմանությունների տարբերությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 9.1. *Ապահովադիրն իրավունք ունի՝*
 - 9.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),
 - 9.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով,
 - 9.1.3. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ գրավոր դիմումի հիման վրա, ստանալ դրա կրկնօրինակը,
 - 9.1.4. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:
- 9.2. *Ապահովադիրը և (կամ) Լիազորված տիրապետողը պարտավոր է՝*
 - 9.2.1. Պայմանագիրը կնքելիս, ինչպես նաև դրա գործողության ընթացքում Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԸ ՈՐՈՇՈՂ հավաստի և ճշգրիտ իրեն հայտնի ԲՈԼՈՐ



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ավտոտրանսպորտային միջոցի շահագործման նպատակը, Լիազորված տիրապետողների ցանկը և այլն), որոնք պետք է ամրագրվեն համապատասխան փաստաթղթով:

9.2.2. Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ այլ ապահովագրության պայմանագրով/վկայագրով նույն վնասը ապահովագրված առկա այլ ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի մասին,

9.2.3. Պայմանագրով ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ և ԺԱՄԿԵՏ(ՆԵՐ)ՈՒՄ ՎՃԱՐԵԼ Ապահովագրավճարը:

9.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

9.3.1. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների և պայմանների կատարումը,

9.3.2. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,

9.3.3. հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած պատահարի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,

9.3.4. Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որի պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ,

9.3.5. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի գումարի հետ (Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում),

9.3.6. պահանջել Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի չափի փոփոխություն, Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացում,

9.3.7. մերժել հատուցման վճարումը ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված կարգով:

9.4. Ապահովագրողը պարտավոր է՝

9.4.1. Ապահովադրին ծանոթացնել Պայմաններին և նրան տրամադրել այդ Պայմանները,

9.4.2. Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

9.4.3. Ապահովադրի պահանջով Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

9.4.4. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում իրականացնել ապահովագրական հատուցում,

9.5. Կողմերը, Լիազորված տիրապետողը և Տուժողը պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

9.6. Կողմերը, Լիազորված տիրապետողը և Տուժողն ունեն Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

10.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Պայմանագրի վրա նշված համապատասխան հեռախոսահամարով:



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 10.2. Մույն Պայմանների 10.1. կետում նշված պահանջից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և (կամ) Լիազորված տիրապետողը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին անհապաղ Ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը, կամ Ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել Ապահովագրական պատահարի մասին՝ Լիազորված տիրապետողի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) Լիազորված տիրապետողը կրում են Ապահովագրողին նրանց կողմից Ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը: Մույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման (Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին տեղեկացվելու) դեպքում Ապահովադիրը և (կամ) Լիազորված տիրապետողը ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) տեղի ունեցած Ապահովագրական պատահարի մասին հայտնել Ապահովագրողին:
- 10.3. Պայմանների 10.1. կետի համաձայն Ապահովագրողին ՊԵՏՔ Է ՀԱՅՏԵԼ Ապահովագրական պատահարի վերաբերյալ նախնական տեղեկատվությունը, որը պետք է առնվազն պարունակի՝
- 10.3.1. Պայմանագրի համարը,
- 10.3.2. տեղեկատվություն տրամադրելու պահին Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ Ապահովադիրին (Լիազորված տիրապետողին) հայտնի ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝ Ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրը և ժամը, վայրը (ճշգրիտ հասցեն կամ հնարավորինս պարզ նկարագրությունը), Ապահովագրական պատահարի մասնակիցների վերաբերյալ տվյալներ (առնվազն նրանց քանակը, հեռախոսահամարները, պատահարին մասնակից այլ Ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը), Ապահովագրական պատահարի համառոտ նկարագիրը, պատահարի հետևանքով պատճառված վնասների բնույթը, վնասի մոտավոր մեծությունը (հնարավորության դեպքում):
- 10.4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և (կամ) Լիազորված տիրապետողը ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՆԱԵՎ.
- 10.4.1. ՁԵՌՆԱՐԿԵԼ ողջամիտ և մատչելի ՄԻՋՈՑՆԵՐ՝ պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար, որի համար պետք է հետևեն Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովադիրին (Լիազորված տիրապետողին) տրված ցուցումներին, եթե այդպիսիք կան: Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադիր (Լիազորված տիրապետողի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Ապահովագրական գումարը,
- 10.4.2. ՉԼՔԵԼ Ապահովագրական ՊԱՏԱՀԱՐԻ ՎԱՅՐԸ և ՉՏԵՂԱՇԱՐԺԵԼ Ավտոտրանսպորտային միջոցը կամ Ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի ներկայացուցչի, իսկ Ապահովագրողի ներկայացուցչի պահանջով՝ նաև ճանապարհային երթուղիների անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ժամանումը և Ապահովագրական պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝
- 10.4.2.1. տեղաշարժերը պայմանավորված են եղել մարդկանց անվտանգությունը ապահովելու և (կամ) ՀՀ օրենսդրության պահանջները կատարելու նկատառումներով,



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 10.4.2.2. տեղաշարժերը պայմանավորված են եղել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ցուցումներով:
- 10.4.3. համապատասխան պահանջի առկայության դեպքում ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵԼ և (կամ) ՄԱՄԱԿՅԵԼ պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին,
- 10.4.4. Ապահովագրողի պահանջով ՏՐԱՄԱԴԲԵԼ ապահովագրական պատահարի պահին վնաս պատճառած Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի վարորդական իրավունքի վկայականը և տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական զննությունն անցած լինելու փաստը հավաստող փաստաթղթեր,
- 10.4.5. Ապահովագրողի պահանջով՝ Ապահովագրական ՊԱՏԱՀԱՐԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ԱՆՑՆԵԼ ալկոհոլի կամ թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ: ՃՏՊ-ի պահին ապահովագրված Ավտոտրանսպորտային միջոցի ղեկին գտնվող Լիազորված վարորդը ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՅԴ ՊԱՀԻՑ 24 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ չօգտագործել ոգելից խմիչք և Ապահովագրողի պահանջի դեպքում նրա հաշվին անցնել լիազորված մարմինների կողմից անցկացվող սթափության վիճակի զննություն, նույնիսկ եթե վերջինս պատահարի տեղի ունենալուց հետո անցել է նման զննություն:
- 10.4.6. Ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և (կամ) փորձագետին ՏՐԱՄԱԴԲԵԼ համապատասխան Ավտոտրանսպորտային միջոցի ՉՆՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, չհարմարեցնելով:
- 10.4.7. մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ փորձաքննության արդյունքների վերաբերյալ իր և (կամ) Ապահովագրական պատահարի մյուս մասնակցի (մասնակիցների) համաձայնության ձեռքբերումը ԱՌԱՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ վթարված Ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են վարորդի կամ ուղևորի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով կամ հրահանգով: Նման դեպքերում Ապահովագրողը և (կամ) Ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող այլ անձը պարտավոր է վթարված Ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներն սկսելուց առնվազն 1 (մեկ) օր առաջ տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին կամ ապահովագրական գործակալին) (հնավորության առկայության դեպքում),
- 10.4.8. ԱՌԱՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԸՆԴՈՒՆԵԼ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ և (ԿԱՄ) ՉՍՏԱՆՁՆԵԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ պատահարի հետ կապված հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ,
- 10.4.9. տեղեկանալուց հետո ԱՆՀԱՊԱՂ Ապահովագրողին տեղեկացնել պատահարը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցվելու վերաբերյալ և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր,
- 10.4.10. Ապահովագրական պատահարի մյուս մասնակցին (մասնակիցներին) ՏՐԱՄԱԴԲԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ, մասնավորապես իր անունը, ազգանունը, բնակության վայրը, Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անունը և ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը (եթե Ապահովագրողը (Լիազորված տիրապետողը) չի հանդիսանում տվյալ Ավտոտրանսպորտային



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

միջոցի սեփականատեր), Ապահովագրողի անվանումը, հասցեն, Պայմանագրի համարը և Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ այլ տվյալներ,

- 10.4.11.ՏՈՒԺՈՂԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել սույն կետի 10.4.2, 10.4.3, 10.4.6, 10.4.10 և 10.4.12 ենթակետերով սահմանված պահանջները,
- 10.4.12.Ապահովագրողին ՏՐԱՄԱԴԲԵԼ ապահովագրական պատահարի վերաբերյալ իրեն հայտնի և իր տրամադրության տակ առկա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը:
- 10.5. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է՝
 - 10.5.1. Ապահովագրական պատահարի մասին Պայմանների 10.1 կետի համաձայն Ապահովադրի և (կամ) Լիազորված տիրապետողի կողմից իրեն տեղեկացման դեպքում, անհրաժեշտ հանգամանքները ճշտելուց հետո, Ապահովադրին և (կամ) Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին տեղեկացնել պատահարի վայր ժամանելու կամ չժամանելու իր մտադրության մասին,
 - 10.5.2. պատահարի վայր ժամանելու իր մտադրությունը Ապահովադրին և (կամ) Լիազորված տիրապետողին հայտնելու դեպքում պատահարի վայրում ապահովել իր ներկայացուցչի՝ ժամանումը ոչ ուշ, քան պատահարի վերաբերյալ ստացված հեռախոսազանգի պահից հետո՝ Երևան քաղաքում 35 րոպեի և ՀՀ, ԼՂՀ այլ տարածքներում՝ 80 րոպեի ընթացքում:
- 10.6. Ապահովադրը (Լիազորված տիրապետողը) կարող է չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս Պայմաններում նշված ժամկետում չի ժամանել պատահարի վայր կամ հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և համապատասխան հետազոտություններ է տվել Ապահովադրին (Լիազորված տիրապետողին) և Տուժողին:

ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՍՑ

- 11.1. Տուժողը ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
 - 11.1.1. ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողի սահմանած ձևով դիմում, որը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված,
 - 11.1.2. դիմումը Պայմանների 11.7. կետով նախատեսված ժամկետներում չներկայացվելու դեպքում՝ տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից 3 (երեք) ամսվա ընթացքում դիմելու անհնարինության կամ Ապահովագրական պատահարի մասին տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ,
 - 11.1.3. անձը հաստատող փաստաթուղթը,
 - 11.1.4. ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կազմած արձանագրությունը,
 - 11.1.5. Տուժողի իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է տուժողի իրավահաջորդը,
 - 11.1.6. ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ,
 - 11.1.7. 11.2., 11.3. և (կամ) 11.4. կետերով նախատեսված փաստաթղթերը և այլ ապացույցներ՝ կախված պատճառված վնասի բնույթից:
- 11.2. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հատուցման համար ներկայացվում են՝
 - 11.2.1. դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն) և (կամ) բժշկական տեղեկանք և (կամ) կոնսուլտացիոն եզրակացություն և (կամ) քաղվածք ամբուլատոր քարտից և (կամ) էպիկրիզ,
 - 11.2.2. բժշկական հաստատության կողմից տրված վճարման հաշիվ և կատարված ծախսերը հիմնավորող այլ փաստաթղթեր,



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 11.2.3. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով աշխատավարձի (եկամուտների) կորստի դեպքում՝ կորցրած աշխատավարձի (եկամուտների) չափը հաստատող փաստաթղթեր,
- 11.2.4. Տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) Լիազորված տիրապետողի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:
- 11.3. Տուժողի մահվան հետ կապված հատուցում ստանալու համար ներկայացվում են՝
 - 11.3.1. օրենքի համաձայն տուժողի մահվան հետևանքով վնասնի հատուցման իրավունք ունեցող անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր,
 - 11.3.2. դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն),
 - 11.3.3. մահվան վկայական,
 - 11.3.4. հուղարկավորության ծախսերի հատուցում պահանջելու դեպքում՝ հուղարկավորության հետ կապված ծախսերը հավաստող փաստաթղթեր,
 - 11.3.5. կերակրող կորցնելու հետ կապված ծախսերի հատուցում պահանջելու դեպքում՝ կերակրողին կորցնելու հետ կապված վնասի հատուցման չափը հավաստող փաստաթղթեր,
 - 11.3.6. Տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և Լիազորված տիրապետողի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:
- 11.4. Տուժողի գույքին պատճառված վնասի հատուցման պահանջի դեպքում ներկայացվում են՝
 - 11.4.1. Ավտոտրանսպորտային միջոցի, ինչպես նաև այլ գույքի վնասման (ոչնչացման) դեպքում՝ վնասվածքի վերականգնման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե Ապահովագրողը չի իրականացրել պատահարի արդյունքում վնասված Ավտոտրանսպորտային միջոցի կամ գույքի գննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով,
 - 11.4.2. Տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) Լիազորված տիրապետողի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:
- 11.5. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովագրական պատահարի հետ կապված հարուցվել է քրեական գործ՝ կապված Ապահովագրական պատահարի առաջացման հետ:
- 11.6. Ապահովադրի պարտավոր է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:
- 11.7. Տուժողը պարտավոր է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (ներառյալ ապահովագրական հատուցում ստանալու համար դիմումը) ներկայացնել Ապահովագրական պատահարից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում: Նշված ժամկետը հաշվարկվում է այն օրվանից, երբ Ապահովադրին կամ Լիազորված տիրապետողին հայտնի է դառել Ապահովագրական պատահարի հետևանքների վրա հասնելու մասին:
- 11.8. Եթե Տուժողը կամ նրա իրավահաջորդը Պայմանների 11.7. կետով սահմանված 3 (երեք) ամսվա ընթացքում Ապահովագրողին չի դիմում ապահովագրական հատուցում ստանալու համար՝ պատահարի հետևանքով անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում լինելու պատճառով, որն անհնարին է դարձրել տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Ապահովագրողին սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելը կամ գույքին պատճառված վնասների առկայության դեպքում՝ այդ գույքի պահպանման համար պատասխանատու անձի (գույքը նրա մոտ գտնվել է այն պահպանելու, օգտագործելու կամ նրա համաձայնությամբ այլ նպատակներով) կողմից պատահարի մասին չտեղեկացնելու պատճառով, ապա նրա համար 3 (երեք) ամիս ժամկետը սկսում է գործել ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելն անհնարին դարձնող հանգամանքների վերացման կամ Ապահովագրական պատահարի մասին տեղեկանալու օրվանից սկսած:
- 11.9. Տուժողը կամ նրա իրավահաջորդը կրում են ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու ապացուցման պարտականությունը:



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 11.10. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Ապահովագրողի կողմից կանխիկ կամ Տուժողի նշած բանկային հաշվին, ինչպես նաև Տուժողին ծառայություններ մատուցած իրավաբանական անձի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 11.11. Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է ամփոփապես (առաջին իսկ հնարավորության դեպքում) ներկայացնի Ապահովագրողին:
- 11.12. Ապահովագրողն իրավունք ունի իրավասու պետական մարմիններից կամ պատահարի առաջացման հանգամանքներին ծանոթ այլ անձանցից ինքնուրույն պարզել պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները, ինչպես նաև հավաքագրել Ապահովագրական պատահարի հետ կապված տվյալներ:
- 11.13. Ապահովագրական պատահարի առաջացման պատճառները պարզելու, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելու նպատակով Ապահովագրողը կարող է իր հաշվին նշանակել փորձաքննություն: Ապահովադիրի, Լիազորված տիրապետողի կամ Տուժողի կողմից տվյալ փորձաքննության անցկացմանը խանգարելու կամ դրանից հրաժարվելու դեպքում Ընկերությունն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը:
- 11.14. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ Ապահովագրողի (Ապահովագրողի ներկայացուցչի) կողմից իրականացված գնման արդյունքների հիման վրա:
- 11.15. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում պատճառված անձնական վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ պատճառված անձնական վնասների չափը գնահատում է տուժողին բժշկական օգնություն ցուցաբերած կամ նրա առողջությունը վերականգնած բժշկական կամ այլ հաստատությունը կամ մասնագետը, իսկ անձի մեղավորության աստիճանը՝ փորձագետը:
- 11.16. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամուտների) հատուցման չափը, ինչպես նաև տուժողի մահվան դեպքում օրենքի համաձայն նրա մահվան հետևանքով վնասի հատուցման իրավունք ունեցող անձանցից յուրաքանչյուրի կրած վնասի հատուցման չափը հաշվարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:
- 11.17. Եթե տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու պահին առկա է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ապա Պայմանների 11.2-11.4 կետերով սահմանված փաստաթղթերի փոխարեն ներկայացվում են միայն ապահովագրական հատուցում ստանալու տուժողի (նրա իրավահաջորդի) դիմումը և գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթը:
- 11.18. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացվում են սահմանված փաստաթղթերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները:
- 11.19. Ապահովագրողը տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Պայմաններով նախատեսված դիմումը ստանալուց հետո պարտավոր է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ: Փորձաքննության ավարտից հետո 13 (տասներեք) աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում՝ ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- ընդունելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովագրին, Լիազորված տիրապետողին և Տուժողին (նրա իրավահաջորդին):
- 11.20. Եթե հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, և ուժի մեջ է մտել այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ, Ապահովագրողը Պայմաններով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին:
- 11.21. Տուժողի գույքին պատճառված վնասները հատուցվում են Տուժողին (նրա ներկայացուցչին կամ ժառանգին) համապատասխան գումար վճարելու ձևով կամ պատճառված վնասի վերականգնման միջոցով: Տարբերակների ընտրությունն իրականացվում է տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) կողմից: Ընդ որում, եթե Ապահովագրողի փորձագետի եզրակացության համաձայն՝ վնասի վերականգնումը հնարավոր կամ ողջամիտ չէ, ապա Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարվում է համապատասխան գումար վճարելու միջոցով:
- 11.22. Տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) կողմից որպես ապահովագրական հատուցման ստացման ձև գույքին պատճառված վնասի վերականգնումն ընտրելու դեպքում Ապահովագրողը Տուժողին (նրա ներկայացուցչին կամ ժառանգին) է տրամադրում համապատասխան գույքը վերանորոգող այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ Ապահովագրողը համագործակցում է, իսկ Տուժողը (նրա ներկայացուցչի կամ ժառանգը) այդ ցանկից ընտրում է որևէ կազմակերպություն: Տուժողը (նրա ներկայացուցչի կամ ժառանգը) իրավունք ունի մինչև ապահովագրական հատուցման ստացման ձևի վերաբերյալ իր ընտրության կատարումը Ապահովագրողից պահանջել համապատասխան գույքը վերանորոգող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ Ապահովագրողը համագործակցում է:
- 11.23. Պայմանների 11.22. կետով նախատեսված դեպքում Տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) ընտրած կազմակերպությունը Ապահովագրողին հայտնում է վնասված գույքի վերանորոգման ժամկետ: Եթե կազմակերպության առաջարկած ժամկետը ընդունելի է Տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) համար, ապա Ապահովագրողը՝ իր, կազմակերպության և Տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) միջև պայմանավորված կարգով և ժամկետներում կազմակերպում է վնասված գույքի վերանորոգումը և դրա դիմաց վճարում է տվյալ կազմակերպությանը: Եթե Տուժողը (նրա ներկայացուցչի կամ ժառանգը) համաձայն չէ կազմակերպության հայտնած ժամկետների հետ, ապա նա կարող է ընտրել Ապահովագրողի ցանկում ներառված այլ կազմակերպություն կամ պահանջել Ապահովագրողից՝ ապահովագրական հատուցումը իրեն վճարել համապատասխան գումարը վճարելու ձևով:
- 11.24. Պայմանների 11.21 կետով նախատեսված դեպքում տուժողի կողմից որպես ապահովագրական հատուցման ստացման ձև համապատասխան գումարի վճարումն ընտրելու դեպքում Ապահովագրողը ապահովագրական հատուցումը վճարվում է միանվագ՝ ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը ընդունելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 11.25. Անձնական վնասների դեպքում ապահովագրական հատուցումը Ապահովագրողի կողմից վճարվում է միանվագ՝ ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը ընդունելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամտի) և տուժողի մահվան (կերակրողին կորցնելու մասով) դեպքում ապահովագրական հատուցումների վճարման դեպքերի:
- 11.26. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամտի) և տուժողի մահվան (կերակրողին կորցնելու մասով) դեպքերում ապահովագրական հատուցման վճարումն Ապահովագրողի կողմից կատարվում է ամենամսյա վճարումների տեսքով մինչև Պայմանների համաձայն համապատասխան հատուցումը ստանալու իրավունքի դադարումը կամ Ապահովագրական գումարի սպառումը, ընդ որում առաջին վճարումը կատարվում է



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ապահովագրական հատուցումը վճարելու մասին Ապահովագրողի որոշումը ընդունելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

- 11.27. Ապահովագրողը հատուցում է Ապահովագրական պատահարի հետևանքով երրորդ անձի կողմից վնասված Ավտոտրանսպորտային միջոցի՝ ՀՀ, ԼՂՀ տարածքում տեղի ունեցած դեպքի վայրից մինչև վերանորոգման կամ Տուժողի կողմից նշված այլ վայր քարշակով տեղափոխման ծախսը (եթե այն հնարավոր չէ տեղաշարժել վարելու միջոցով)՝ հետևյալ սահմանաչափով՝ Երևան քաղաքում տեղափոխման համար հատուցվող գումարը չի կարող գերազանցել 10.000 ՀՀ դրամը, իսկ ՀՀ, ԼՂՀ և այլ տարածքներից տեղափոխման համար՝ 30.000 ՀՀ դրամը: Ապահովագրողը որևէ պարտավորություն չի կրում սույն կետով սահմանված տեղափոխման կազմակերպման և (կամ) ապահովման համար, այլ իր հայեցողությամբ կարող է միայն աջակցել այդ ծառայության կազմակերպմանը:
- 11.28. Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը Պայմաններով սահմանվում է 0 (զրո) ՀՀ դրամ:

ԲԱԺԻՆ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ

- 12.1. Պայմանագրի գործողությունը դադարում է Պայմանագրի ժամկետը լրանալու պահից:
- 12.2. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝
 - 12.2.1. Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից տարբերվող այլ անձի անունով՝ բացառությամբ եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի վարձակալն է: Եթե Ապահովադիրը տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալն է, ապա Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է այն դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը և Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովադրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի,
 - 12.2.2. Ավտոտրանսպորտային միջոցը հանվել է պետական հաշվառումից,
 - 12.2.3. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
 - 12.2.4. Ապահովադրի պահանջով՝ ցանկացած ժամանակ, բայց ոչ շուտ, քան Ապահովադրի կողմից համապատասխան մտադրության մասին Ապահովագրողին ծանուցելու օրվանից 15 (տասնհինգ) օր հետո,
 - 12.2.5. Ապահովագրողի պահանջով, եթե Ապահովադիրը թույլ է տվել Պայմանների էական խախտում: Մույն ենթակետի հիմքով Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովագրողի կողմից խախտումը հայտնաբերելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում: Ընդ որում, Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու վաղաժամկետ լուծել Պայմանագիրը, եթե Ապահովադիրը խախտել է Պայմանների 9.2.1 կետով սահմանված պահանջը, սակայն արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդեցություն ունեցող հանգամանքները, ինչպես նաև եթե Ապահովադրի կողմից Պայմաններով նախատեսված պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով,
 - 12.2.6. Ապահովադրի պահանջով, եթե Ապահովագրողը թույլ է տվել Պայմանների էական խախտում: Մույն ենթակետի հիմքով Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովադրի կողմից՝ նման խախտումը հայտնաբերելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում,



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 12.2.7. Ապահովագրողի պահանջով, եթե սույն պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովագրողը սույն պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին (Ապահովագրողի լիազորված անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ: Ընդ որում, Ապահովագրողը չի կարող օգտվել սույն կետում նշված իր իրավունքից, եթե պայմանագրի կնքման պահին նա գիտեր կամ կարող էր իմանալ, որ Ապահովագրողի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ կամ պայմանագիրը կնքվել է ապահովագրական սակագնի որոշման վրա ազդող հանգամանքներին վերաբերող Ապահովագրողի հարցադրումներում Ապահովագրողի պատասխանի կամ Վկայագրի համապատասխան մասերում տեղեկատվության բացակայության պայմաններում:
- 12.2.8. Ապահովագրողի պահանջով՝ եթե Ապահովագրողը ծանուցել է Պայմանների դրույթների փոփոխման մասին և Ապահովագրողը համաձայն չէ կատարված փոփոխություններին,
- 12.2.9. Ապահովագրողի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ և պայմանավորված ժամկետներում,
- 12.2.10. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում և կարգով:
- 12.3. Պայմանների 12.2.1, 12.2.2 և 12.2.3 ենթակետերով նախատեսված հիմքերի առաջացման դեպքում Ապահովագրողին այդ մասին անհապաղ տեղեկացնում է Ապահովագրողին՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դիմումին կցելով նման հիմքերի առկայությունը հավաստող համապատասխան փաստաթղթեր:
- 12.4. Պայմանների 12.2.1, 12.2.2 և 12.2.3 ենթակետերով նախատեսված դեպքերում պայմանագիրը վաղաժամկետ դադարում է համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին և Ապահովագրողն Ապահովագրողին վերադարձնում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները: Ընդ որում, Պայմանների 12.2.1, 12.2.2 և 12.2.3 ենթակետերով նախատեսված հիմքերով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից սկսված, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:
- 12.5. Պայմանների 12.2.4 ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողն Ապահովագրողին վերադարձնում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, ընդ որում ապահովագրավճարի՝ չլրացած ժամկետի համար վճարված մասի հաշվարկման համար Ապահովագրողի կողմից հիմք են ընդունվում Ապահովագրողի կողմից պայմանագրի համաձայն Ապահովագրողին փաստացի վճարված ապահովագրավճարների 80%-ը ($(\text{վճարված ապահովագրավճար} * 80 \% / \text{պայմանագրի գործողության օրեր}) * \text{պայմանագրի չլրացած օրեր}$):
- 12.6. Պայմանների 12.2.5 ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովագրողին վերադարձվում են Ապահովագրողի կողմից Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, իսկ հաշվարկներն իրականացվում են Պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ:
- 12.7. Պայմանների 12.2.6 ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովագրողին վերադարձվում են Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, իսկ հաշվարկներն իրականացվում են պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ: Այն դեպքում, երբ պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ)
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է, ապա Ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ:

- 12.8. Պայմանների 12.2.7 ենթակետով նախատեսված դեպքերում պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրի կողմից սույն պայմանագրով Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:
- 12.9. Պայմանների 12.2.8 և 12.2.9 ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովադիրին վերադարձվում են Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված Ապահովագրավճարները, իսկ հաշվարկներն իրականացվում են պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ:
- 12.10. Սյն դեպքում, երբ Վկայագրում նշված են մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցներ և սույն Պայմանագրի դադարման հիմքերը վերաբերում են դրանցից ոչ բոլորին, ապա Պայմանագիրը դադարեցվում է միայն տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի մասով, և սույն գլխով սահմանված հաշվարկները կատարվում են միայն այդ Ավտոտրանսպորտային միջոցի մասով:

ԲԱԺԻՆ 13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 13.1. Սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, սահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:
- 13.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:
- 13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

- 14.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի, Լիազորված տիրապետողի և Տուժողի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:
- 14.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: